

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՎԵՐՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝

Հաստատվել է համայնքի ավագանու 16.12.2016թ. թվի 32-Ն որոշմամբ:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

2.3 Համայնքի տարածքում նախատեսվող/շարունակվող/

հանրապետական և

մարզային միջհամայնքային համագործակցության և այլ

ծրագրերի

միջոցառումներ

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն,  
գնահատման

կանխատեսում

2.5 Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող  
գործոններ

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և

սպառնալիքների նկարագրություն

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍԻՔ

Վերնաշեն համայնքը ունի 1340 մշտական բնակչություն: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցն երբ հոգալու համար: դա նպաստում է արտագաղթի աճին:

Համայնքում կարևորագույն խնդիր է աշխատատեղեր ստեղծումը:

Համայնքում առաջնային խնդիրներից են մանկապարտեզի շենքի վերանորոգումը, որն արդեն մեկ տարի է չի գործում, խմելու ջրի ներքին և արտաքին ցանցի վերանորոգում:

Հետևաբար համայնքի զարգացման հեռանկարային պլանում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ՀՀ կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը

- Նոր աշխատատեղերի ստեղծում
- Խմելու ջրի ցանցի և ջրավազանի վերանորոգում
- Մանկապարտեզի շենքի վերանորոգում
- Ոռոգման ջրագծի ներտնտեսային համակարգի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում
- Գյուղատնտեսության զարգացում

Համայնքը համագործակցում է «Ռազմավարական գարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ, ՀՀ «Գյուղական տարածքների գարգացման ՕԻԳ» ՊՀ-ի հետ, նախատեսվում է համագործակցել այլ ծրագրերի հետ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.

Վերնաշեն գյուղը գտնվում է Վայոց Ձորի մարզում՝ մարզկենտրոն Ելեգնաձորից 5կմ հյուսիս-արևելք: Գյուղը հիմնադրել են 1827թ.Սալմաստ գավառից ներգաղթածները: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1400-1450 մ բարձրության վրա:

Համայնքն ունի զբոսաշրջության համար հետաքրքրություն ներկայացնող պատմական և մշակութային հուշարձաններ: Գյուղի կենտրոնական մասում գտնվում է Հայրենական մեծ պատերազմի զոհվածների հիշատակին կառուցված հուշարձանը:

Գյուղի կլիման արտահայտվում է հետևյալ տիպերով՝ չոր ցամաքային չափավոր ցուրտ ձմեռ, բարեխառն երկարատև տաք ամառ: Համայնքին բնորոշ են ուժեղ քամիներ, որոնց ուղղությունը հարավ արևելյան է, ցրտահարություններաշտ:

Համայնքում կա 345 առանձնատուն, 38.81 հազ. քմ .տարածքով:

Համայնքի բնակչության ընդհանուր թվաքանակը 1340 մարդ:

#### *Բնակչության տարիքային կազմը հետևյալն է*

	0-6 տարեկան	7-17 տարեկան	18-62 տարեկան	63 և բարձր	ընդամենը
Բնակչության թվաքանակ	89	138	874	239	1340
Թոշակառու				229	
հաշմանդամ		6	61		

ՀՈՂԱՏԱՐԱԾՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը	- 6729,32 հա, որից
• Վարելահողեր	- 472,33հա:
• Խոտհարք	-176,46 հա
• Արոտավայրեր	-1086,42հա
• Այլ հողատեսքեր	-4731,17հա
• Տրանսպորտային նշանակության	-7,41 հա
• գյուղատնտեսական արտադրության	- 11,53 ու:
• Ընդհանուր օգտագործման	- 15,16 հա
• Բնակելի կառուցապատման	- 99,76 հա
• ընդհանուր օգտագործման	-15.1 հա
• Պատմամշակութային	-26,21 հա
• Գյուղական փողոցներ	- 5 հա
• հասարակական կառուցապատման	-3,14 հա
• պտղատու այգի	-29,21հա:
• Խաղող	- 31,96հա
• այլ հողեր	-16.23 հա
• Ջրային հողեր	- 14,26 հա
• Էներգետիկայի	- 8,07 հա

Համայնքն ունի ֆիքսված և բջջային հեռախոսակապ:

Համայնքն ունի փոստային բաժանմունք: Համայնքը գրեթե ամբողջությամբ  
գազաֆիկացված է:

Համայնքի բնակչությունը օգտվում է միջհամայնքային տրանսպորտային միջոցից:

## 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Վերնաշեն համայնքի տարեկան բյուջեն կազմում է 30296,1 հազար դրամ է, որից սեփական եկամուտները կազմում են 5850,0 հազար դրամ, ընդհանուր եկամուտների 19,3%-ը: Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են այգեգործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ:

Գյուղատնտեսության բնագավառում զբաղվում են բնակչության 60 տոկոսը:

Համայնքի տարածքում են գտնվում եկեղեցիներ, խաչքարեր՝

1. Թանահատի վանքը, որը կառուցվել է 13-րդ դարում և այնտեղ գտնվել է Գլաձորի

համալսարանը,

2. Արկազի Սուրբ խաչ եկեղեցին՝ կառուցված 19-րդ դարում:

3. Գլաձորի համալսարանի պատմության թանգարան

Համայնքն ունի զբոսաշջության զարգացման համար նպաստավոր պայմաններ: Համայնքում գործում է մեկ հյուրատուն:

Համայնքն ունի միջնակարգ դպրոց, որը նախատեսված է 320 աշակերտի համար, վերջին տարիներին վերանորոգված, զագաֆոկացված, բազմալիճակում է գտնվում: Դպրոցում սովորում են 82 աշակերտ:

Մանկապարտեզը չի գործում, քանի որ վերանորոգված չէ:


Համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1988թ: Մշակույթի տունն մասնակիորեն վերանորոգված է, սակայն չկան անհրաժեշտ գույք, ապրավորումների տասարդության հանգստի ժամանակը հետաքրքիր կազմակերպելու համար: Գործում են ֆուտբոլի, վոլեյբոլի խմբակներ: Համայնքը չունի ֆուտբոլի դաշտ:

Համայնքն ունի բուժկետ :

### Սոցիալ-տնտեսական իրավիճակ

1	Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 30296,1 հազար դրամ
2	Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների 1-ամիսը 5850,0 հազար դրամ
3	Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքի և ծախսերը- խազող 910ց, ծիրան 20ց, խնձոր 90ց,, բկույզ 130ց կաթ 1400լ
4	Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմական և մշակութային հուշարձաններ- Գլաձորի համալսարան, <<Սուրբ խաչ>> եկեղեցի Գլաձորի համալսարանի պատմության թանգարան,
5	Դպրոցական նախադպրոցական կրթական հաստատություններ - 1 միջնակարգ դպրոց, նախատեսված է 320 աշակերտի համար, 1 մանկապարտեզ նախատեսված է 100 հոգու համար, չի գործում վերանորոգված չլինելու պատճառով
6	Առողջապահական հաստատություններ - 1 բուժկետ
7	Մշակույթի տուն – 1, վերանորոգված Գրադարան 1 Համայնքապետարանի վարչական շենք 1
8	Ընտանեկան նպաստի համակարգում գրանցված ընտանիքների- 36

### Վերնաշեն համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ



## 2.3 Համայնքի տարածքում նախատեսվող/շարունակվող/ հանրապետական և մարզային միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի միջոցառումներ

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք 5տարիների համար նախատեսվում է

1. «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի Հայաստանի ներկայացուցիչների հետ համագործակցության շրջանակներում իրականացնել խմելու ջրի ցանցի վերանորոգում: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1989 թվականին, այլ վերանորոգման կարիք ունի: Համայնքն ունի ջրահավաք ավազան, այլ գտնվում է կիսավթարային վիճակում, որի պատճառով ազգայնակյությանը մասակարավող ջրի որակը շատ ցածր է: Խմելու ջրի ջրագծի վերանորոգման և ջրահավաք ավազանի վերանորոգման արդյունքում համայնքի բնակիչները կօգտվեն շուրջօրյա ջրամատակարարումից:
2. Կրթության նախարարության ՄԻԳ-ի հետ համագործակցության շրջանակներում իրականացնել մանկապարտեզի շենքի վերանորոգում: Համայնքի մանկապարտեզի վերաբացումը կապահովի երեխաների նախադպրոցական կրթությունը, մանկապարտեզում աշակերտներին զբաղվածություն կունենան շուրջ 10 աշխատակից:
3. «ՀՀ գյուղական տարածքների տնտեսական զարգացման ՕԾԳ» պետական հիմնադրամի օգնությամբ իրականացնել ոռոգման ջրագծի և դամբարանային համակարգի բարեկարգում: Նախատեսվում է համայնքում լրացուցիչ անցկացնել 1,2 կմ ջրագիծ:




Համայնքը համագործակցում է և շարունակելու է Լսմագործակցելի «Ռուզմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ «Անասնապահության զարգացում Հարավային Գովկատում» ծրագրի շրջանակներում: Համագործակցության նպատակը ռամայնքում անասնապահության զարգացումն է, որը կնպաստի համայնքում բնակիչները եկամտի աճին:


## 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատման կանխատեսում

Համայնքի սեփական եկամուտները 2016թվականին 5850,0 հազար դրամ է, որը գոյանում է հողի հարկից, գույքահարկից, տեղական սուբսեբսիդի, հողի վարձակալությունից, պետության կողմից տրամադրված արձատնական տրանսֆերտներ՝ 22424,4 հազար դրամ: Համայնքի սեփական եկամուտների հավաքագրումները կապված են որոշակի դժվարությունների հետ: Քաղ. որ բնական աղետների՝ ցրտահարության, կարկտահարության պատճառով գյուղացիական տնտեսությունները կարող են կորցնել իրենց բերքի՝ ամբողջ ստաբիլ եկամտի, մինչև 80 տոկոսը:

### Վերնաշեն համայնքի սեփական եկամուտների դինամիկան 2013-2015թթ



## Վերնաշեն համայնքի 2013-2015թթ եկամուտների և ծախսերի դինամիկան



### 2.5 Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոններ

1. Վերնաշեն համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ, անասնապահությամբ: Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան և գործիքնայրը լուրջում են անսարք վիճակում, օգտագործման ենթակա չեն: Առանց գյուղատնտեսական տեխնիկայի և մեխանիզմների հնարավոր չէ գյուղում զարգացնել գյուղատնտեսություն:
2. Համայնքի մանկապարտեզը չի գործում, քանի որ վերանորոգման կարիք ունի:

3. Համայնքում ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման համար մշակույթի տունը չունի անհրաժեշտ գույք և սարքավորումներ, համայնքը չունի խաղահրապարակ, ֆուտբոլի դաշտ:
4. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը, ընտանիքային շինարարությունը կապված են ֆինանսական խնդիրները հետ:
5. Պետության պաշտպանության իրականացման աջակցմանը խնայողորոտում է արտագաղթը:
6. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը դժվարանում է անբավարար ֆինանսական միջոցների պատճառով: Համայնքն ունի թաքստացույցը գտնվում է անմխիթար վիճակում:
7. Շրջակա միջավայրի պահպանությանը խանգարում են արբանյանության ոչ ճիշտ կազմակերպումը, ոռոգման առունների աղբոտումը, բազմաշերտ մետաղային հանքավայրի շահագործումը:
8. Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խանգարում են սոցիալական իրավիճակը, աշխատատեղերի բացակայությունը, արտագաղթը:

## **2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորություններ և սպառնալիքների նկարագրություն**

### **Համայնքի ուժեղ կողմերը**

- Աշխարհագրական դիրքը, մարզկենտրոնից հեռավորությունը 5կմ է:
- Հանրապետական նշանակության մայրուղիները մաս են համայնքին:
- Համայնքն ունի նպաստավոր պայմաններ
- Խաղողագործության
- անասնապահության զարգացման համար

### **Համայնքի թույլ կողմերը**

- Գործազրկություն
- Ծնելիության նվազում
- Վարելահողերը չեն մշակվում անջրդիության պատճառով

### **Սպառնալիքներ**

- Համայնքին սպառնալիք են հանդիսանում բնական աղետները՝ ցրտահարություն, կարկտահարություն, երաշու:

### **Համայնքի հնարավորությունները**

- խաղողագործությունը
- գինեգործություն
- անասնապահություն

## **3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

Համայնքի բնականոն զարգացման համար խիստ կարևորվող միջև առումներ և ծրագրեր ենք տեսնում նախադարձական կրթության, գյուղատնտեսության, քաղաքաշինության բնագավառներում առկա խնդիրների հետևողական բուժումները:

### **ԾՐԱԳԻՐ 1**

#### **Նախադարձական կրթության ոլորտ**

Այս ոլորտում գերակա ենք համարում համայնքի մասնապարտեզի վերաբացումը, ինչը ներկայումս անհնարին է դարձել մանկապարտեզի շենքային ոչ բարվոք պայմանների պատճառով: Շենքային պայմանների բարելավումի, կամ շենքի

հիմնանորոգումը ընդհանուր առմամբ հաշվարկվում է 40մլն դրամի չափով, որի 10 տոկոսը, կամ 4մլն դրամը համայնքը ներկայումս չլսելուստ է համաֆինանսավորելու:

Ինքնին հասկանալի է, որ նման կարևորագույն հաստատություն վերաբացումը լուծում է մի շարք խնդիրներ.

1. ապահովվում է նախադպրոցական տարիքի երեխաների կյանքը, բնը,
2. մանկապարտեզում հիմնական աշխատանքային զբաղվածության կունենա շուրջ 10

աշխատակից,

3. մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողները կունենան ազատ ժամանակ իրենց զբաղվածությունը գյուղատնտեսության ոլորտում ապահովելու համար / հողագործություն և անասնապահություն/:

## **ԾՐԱԳԻՐ 2**

### **Քաղաքաշինության ոլորտ**

Ոլորտում առկա գերխնդիրը դա խմելու ջրի ջրահավաք ավազանի վերակառուցումն է, ինչպես նաև խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի հիմնանորոգումը:

Ջրահավաք ավազանները, որոնցից յուրաքանչյուրի տարողությոնը 250տ է, ներկայումս գտնվում են կիսավթարային վիճակում, ինչը խոչընդոտում է լիարժեք ծավալով ջուր կուտակելու և կուտակված ջուրը ազգայնակշիւթանը շուրջօրյա ռեժիմով մատակարարելու համար: Այդ պատճառով խմելու ջուր չի մատակարարվում գյուղի բնակչության շուրջ 20%-ին: Գյուղին տրամադրվող ջրի որակը վերոնշյալ պատճառներով շատ ցածր է: Ջրահավաք ավազաններում սանիտարական մաքրում տեղի չի ունենում, վերոնշյալ պատճառով, ինչի հետևանքով ակնհայտորեն առաջանում է ազգաբնակչության բժշկության:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է 30մլն դրամ, որից 3մլն դրամ համայնքի պարտավորվում է համաֆինանսավորել համայնքի բյուջեից:

Նախատեսվում ծրագիրը իրականացնել «Վերջին օրերի սյրերի բարեգործություններ» կորպորացիայի Հայաստանի ներկայացուցիչների հետ համագործակցության շրջանակներում:

### **ԾՐԱԳԻՐ 3**

#### **Ոռոգման համակարգի բարեկարգում**

Կարևոր է համայնքում ոռոգման ներտնտեսային ցանցի վերականգնումը: Նախատեսվում է համայնքում լրացուցիչ անցկացնել 1,2կմ ջրաղիծ: Դա հնարավորություն կտա համայնքի շուրջ 47 գյուղագիական տնտեսություններ կարողանան 21 հա պտղատու այգիները ստնամերձ հողամասերը լրարժեքորեն ոռոգեն, զարգացնեն այգեգործությունը:

Ոռոգման ներտնտեսային համակարգի վերականգնումը գյուղացիական տնտեսությունները կունենան եկամուտների 10-30 տոկոս աճ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ-ի պետական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում: Վերնաշեն համայնքի 2016թվականի բյուջեից սրամուղբվել է համաֆինանսավորում 650000դրամ «ՀՀ գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ին, և դա կլինի շարունակական ծրագիրն իրականացնելու համար:

Խիստ հեռանկարային է Կորեկաձոր կոչվող հանրամասում ջրամբարի կառուցման ծրագիրը, որը հնարավորություն կտա ոռոգելի դարձնել շուրջ 1000հա հողատարածք: Այդ 1000հա-ից 450հա հողատարածքը վերնաշեն համայնքին պակասող վարելահողեր են, իսկ մնացած 550հա-ը կոռոզվի սահմանում ից Գլաձորի և Մալիշկայի համայնքներում:

Անհրաժեշտ է նկատել, որ վերոհիշյալ ջրամբարի կառուցման աշխատանքները նախագծվել են դեռևս խորհրդային տարիներին, սակայն այդպես էլ մուգին որպես ծրագրեր:

#### **ԾՐԱԳԻՐ 4**

##### **Գյուղատնտեսության ոլորտ**

Բնակավայրը բավականաչափ ավանդական բնույթ է կրում գյուղի ազգաբնակչության շուրջ 70%-ի համար:

Հողագործությունը ներկայումս գտնվում է շատ ցածր մակարդակ վրա, բան որ համայնքում բացակայում է այնպիսի գյուղատնտեսական տեխնիկա, որը յուրաքանչյուր անհրաժեշտ պահի հասանելի կլինի:

Այդ նպատակով դեռևս 2015թվականի մայիս ամսին ձևավորվել է գյուղատնտեսական կոոպերատիվ, որին ներկայումս անդամակցում են 87 գյուղացիական տնտեսություններ: Սակայն կոոպերատիվի արդյունավետ աշխատանքների իրականացման համար դեռևս բավարար բանակույ յուր բ տեսակի գյուղատնտեսական տեխնիկա չկա: Այդ բոլորի հետևանքով է տ սորհրդային ժամանակահատվածում գյուղատնտեսական հողերի անասելի թեքատվության անկում է նկատվել, որը հիմնականում կապված է երկարատև ժամանակահատվածով հողերի ագրոկանոններին համապատասխան չմշակվելու հետ:

Վերոնշյալ խնդիրը հնարավոր է լուծել 18մլն դրամի ստամաններում ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Վերջինիս ֆինանսավորման հնարավորության դեպքում համայնքը պարտավորվում է կատարել 3մլն դրամի համաֆինանսավորում: Խնդրի լուծման պարագայում ներկայումս շուրջ 650հա վարելահողերը հնարավոր կլինի լիարժեք մշակել:

Առավել քան ակնհայտ է, որ հողագործության զարգացման նման ս.է.ևլ.րի դեպքում զուգահեռաբար կմեծանան հնարավորությունները անասնապահության ոլորտում:

Թվային տվյալներով վերլուծության պարագայում, հարկ է նշել, որ ներկայիս 380զլուիս խոշոր եղջերավոր և 350զլուիս մանր եղջերավոր անասունների թիվը ակնհայտորեն կարող է հասնել եռակի կամ քառակի անգամ ավելի մեծ թվի:

Այս ոլորտի զարգացմանը նպաստել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ համագործակցության շնորհիվ 2016թվականին համայնքում իրականացված արտավայրերի ջրարբիացման ծրագիրը:

Գյուղատնտեսության զարգացումը կավելացնի համայնքի բնակչության եկամուտների աճը, որը կնպաստի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:

## **ԾՐԱԳԻՐ 5**

### **Զբոսաշրջության ոլորտ**

Վայոց ձորը յուրօրինակ զբոսաշրջային գոտի է, հարուստ պատմա-շակութային արժեքներով և պատմությամբ: Մարզի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացմանը, Այս առումով բացառություն չէ սակ. Վերնաշեն համայնքը, որի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության զարգացմանը, մասնավորապես համայնքի տարածքում է գտնվում Թանահատը վանքը, Մուրլ խաչ եկեղեցին, Գլաձորի համալսարանի թանգարանը, խաչքարեր, մատուռներ, ինչպես նաև համայնքի տարածքով է անցնում դեպի Սպիտակավոր և Պռոշապերդ տանող ճանապարհը:

Այժմ համայնքում գործում է 1 հյուրատուն, որը հաջողությամբ գործում է, սակայն կարիք կա ավելացնելու համայնքում հյուրատների թիվը, որը նախատեսվում է կատարել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, ինչպես նաև դիմելով ծրագրերի (մասնավորապես մարզում գործում է Թրվանձեալ գյուղական համայնքների զարգացման ծրագիրը, որը տրամադրում է 6% վարկեր համայնքների բնակիչների կողմից ներկայացված բիզնես ծրագրերի համար):

Այսպիսով նախատեսվում է համայնքում վերը նշված միջոցներով առաջիկա 5 տարիներին՝ 2017-2021թթ. ավելացնել հյուրատների քանակը: Ընչպես նաև



զարգացնել ագրոտուրիզմը՝ զբոսաշրջային սեզոնին կազմակերպել այլևս ոչ միայն պատմամշակութային վայրեր, այլև մասնակցություն բերքահավաքի գրնու և այլ գյուղատնտեսական արտադրանքների պատրաստման գործընթացներին:

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

**«Վերնաշեն համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանդրում»**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Նախադպրոցական հաստատությունում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին արտահայտված տոկոսով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	100	100	100	100	100	100	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին արտահայտված տոկոսով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	100	100	100	100	100
	2. Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
	բավ	բավ	բավ	բավ	բավ	բավ	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1.Մանկապարտեզի շենքի նորոգման նախագծահաշվարկային և սահմանափակում կազմում 1.2.Շինարարական աշխատանքների իրականացում						
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ							
2.1.Ֆուկուս խմբերի շրջանում հարցումներ							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 Կապիտալ ծախսեր՝ 7000000դրամ Ընդհանուր բյուջեն՝ 7000000դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ բացառությամբ ֆինանսապահի չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Վերնաշեն համայնքում է						
Ծրագրի հիմնական շահառուները	3-6 տարեկան երեխաներ և նրանց ծնողներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներկայումս Վերնաշեն համայնքում մանկապարտեզահասակ բոլոր երեխաները հաճախում են Եղեգնաձորի և Գլաձոր համայնքի մանկապարտեզներ։ Քանի որ այս պայմաններում Եղեգնաձորին, Գլաձորին մոտ գտնվելու պարագայում կա վտանգ, որ երեխաները կշարունակեն հաճախել ավելի բարեկարգ վիճակում գտնվող Եղեգնաձորի, Գլաձոր համայնքի մանկապարտեզներ։ Նման խնդրից խուսափելու, երեխաների առողջ ու անվտանգ ուսուցանվելու իրավունքն իրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել մանկապարտեզի հիմնանորոգում						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Վերնաշեն համայնքի խմելու ջրագծի վերանորոգում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի խմելու ջրագծի վերանորոգում, համայնքի բնակիչներին ջր րջջօրյա խմելու ջրով ապահովում						
Ծրագրի անմիջական նպատակ	Բնակիչների բավարարվածություն խմելու ջրի մատակարարում և որակից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	բավ	բավ	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Խմելու ջրագլխի վերանորոգում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առկա չէ	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
	2. Բնակիչների բավարարվածություն խմելու ջրի մատակարարում						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
		Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	բավ	բավ	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1. Խմելու ջրի ցանցի վերանորոգման նախագծային աշխատանքներ 1.2. Խմելու ջրի ցանցի վերանորոգում 1.3 Խմելու ջրի ջրամբարի վերանորոգում						
Ծրագրի հիմնական գործողությունները	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 4մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 4մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն: պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Վերնաշեն համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Վերնաշեն համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը հնարավորություն Վերնաշեն համայնքի բնակիչներին ապահովել շուրջօրյա ջրամատակարարումով և մաքուր, որակյալ խմելու ջրով:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Վերնաշեն համայնքի ոռոգման ներքին ցանցի բարեկալ գում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	ԹրրախալիՆ Ա.Ր.Ե.Ն.Եր				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Գյուղատնտեսությամբ զբաղվողների եկամտի տայնեկան աճ	Ելակետային արժեք	ԹրրախալիՆ Ա.Ր.Ե.Ն.Եր				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ցուցանիշներ	2	2	5	5	5	5
		2. Բերքատվության աճ	Ելակետային արժեք	ԹրրախալիՆ Ա.Ր.Ե.Ն.Եր			
	2016		2017	2018	2019	2020	2021
	2	2	5	5	5	5	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Ոռոգման 1,2կմ ջրագծի կառուցում,</p> <p>1.2. Բնակիչների շրջանում բացատրական աշխատանքի վարում արդյունավետ ոռոգման համար</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Գյուղատնտեսական կուլտուրաների մշակման ագրոտեխնիկական կանոնների ծանոթացում</p> <p>2.2. Հողերի ճիշտ մշակման, պարարտացման կանոններին ծանոթացում</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 625000դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 2000000 դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 2000000դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Վերնաշեն համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Վերնաշեն համայնքի գյուղատնտեսությամբ զբաղվող տնային տնտեսություններ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վերնաշեն համայնքը ավանդաբար գյուղատնտեսության համար ունի լավ կլիմայական պայմաններ : 1,2կմ ոռոգման ջրագծի կառուցումը հնարավորություն կազմեցնի բնակիչներին զարգացնել գյուղատնտեսությունը և ակնկալել ավելի մեծ օրնրքատվություն և եկամուտ:						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Վերնաշեն համայնքում գյուղատնտեսության զարգացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում գյուղատնտեսական մեխանիզմների ձեռք բերում գյուղատնտեսության զարգացում					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքում գյուղացիական տնտեսություններին պատկանող վարելահողերի մշակում բերքատվության աճ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թրրախալային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
0	0	2	2	2	5	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Գյուղատնտեսության զարգացում, բնակչության եկամտի աճ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թրրախալային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	Առկա չէ	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
	1. Բնակիչների եկամտի աճ					
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թրրախալային արժեքներ				
-	2016	2017	2018	2019	2020	2021
-	բավ	բավ	բավ	բավ	բավ	բավ
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Գյուղատնտեսական մեխանիզմների ձեռք բերման նպաստաշնորհային փաստաթղթերի կազմում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 Կապիտալ ծախսեր՝ 3 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3 մլն դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Վերնաշեն համայնքն ունի:					
Ծրագրի հիմնական շահառուները	Վերնաշեն համայնքի գյուղացիական տնտեսություններ					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է Վերնաշեն համայնքում 650 հա վարելահող չի մշակվում: Նման խնդրից խուսափելու, գյուղատնտեսությունը զարգացնելու համար անհրաժեշտ է մեխանիզմների ձեռք բերում իրականացնել:					